ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/16

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոքաբեր՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Հարությունյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթ, հեղուկ վառելիքի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 04.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2020թ.-ի թիվ 4 արձանագրային որոշումը՝ թիվ 1 չափաբաժնի մասով, վերացնելով որոշման հետևանքները:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ին նույն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 04.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/17 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/17 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/16 համարի ծածկագիրը, իսկ 18.02.2020թ.-ին և 28.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 28.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.03.2020թ.-ին:

2. «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն 04.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը որոշելիս Հանձնաժողովը գտել է, որ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում և 30.12.2019թ. ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված եզրակացության մեջ առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորան չափանիշին համապատասխանությունը առկա չէ, քանի որ Ընկերության կողմից համանման ներկայացված /նմանատիպ/ պայմանագիրը դեռևս ավարտված չէ (որպես պայմանագրի ավարտ սահմանված է 29.12.2019թ):

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին համապատասխանությունը առկա չէ, քանի որ Ընկերության կողմից «հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկից»:

Հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու անհամապատասխանությունները:

Ընկերությունը ներկայացրել է փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը արձանագրել է՝

Ընկերության կողմից ներկայացված համանման պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների հանրագումարային ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է Ընթացակարգի շրջանակներում Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ինչպես նաև ըստ Ընկերության ներկայացրած գրության պետք է ներկայացվեր թվով 18 պայմանագիր, այնինչ փաստացի ներկայացել է միայն 14-ը, ուստի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը առկա չէ:

Հանձնաժողովը չի ստացել Կոմիտեից տրված որևէ նոր տեղեկատվություն, մինչդեռ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից, ուստի քանի որ Ընկերությունը հայտ է ներկայացրել 09.12.2019թ. ուստի Ընթացակարգի շրջանակներում հաշվետու տարիներ են համարվում 2016-2018թթ:

Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացների կազմակերպման» կարգի 43-րդ

կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ որոշել է մերժել «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Պայմաններ, որոնց, ըստ հանձնաժողովի, պետք է համապատասխանի Ընկերությունը.

Վերջին երեք հաշվետու տարիների ընթացքում Ընկերության համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի 736,000,000 ՀՀ դրամից (Ընկերության ներկայացրած գնային առաջարկից):

Ընկերության կողմից համանման պայմանագրերի շրջանակներում մատակարարվածապրանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ պակաս է 368,000,000 ՀՀ դրամից՝ (Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից):

Բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Ընկերությունը (От кого: GEVORG DANIELYAN <gevorg.danielyan.89@mail.ru> Кому: t.abrahamyan t.abrahamyan@mil.am Копия: artyom.voskanyan.9 <artyom.voskanyan.9@mail.ru> Дата: Среда, 15 января 2020, 19:43 +04:00 Тема: LIMON GRUP 2-RD PULI PASTATXTER SHTKVAC xndrum enq ditarkel ays tarberak@) վավերապայմաններով) վավերապայմաններով էլեկտրոնային նամակով ներկայացրել է հետևյալ պայմանագրերը և հաշվապահական (հարկային նշանակության) փաստաթղթերը՝

Պայմանագրեր՝

Ներկայացվել են 26 օգոստոսի 2019թ. մինչև 18 նոյեմբերի 2019թ. կնքված և կատարված ընդհանուր առմամբ 18 ընկերությունների հետ համանման պարտավորական հարաբերությունները հիմնավորող փաստաթղթեր, որոնք ներառում էին պայմանագրերը, հանձնման-ընդունման ակտերը և գործարքների իրական լինելը հիմնավորող համապատասխան հարկային հաշիվները, այլ տեղեկանքներ և գրություններ:

Պայմանագրերի արժեքը գնային արտահայտությամբ ընդհանուր առմամբ կազմում է 416,028,467.00 ՀՀ դրամ, իսկ մատակարարված վառելիքի ընդհանուր քանակը՝ 1,084,220.00 լիտր (տես հավելված 1-ում):

Մետաղ կայմ հիդրո քոնսթրաքշն ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի գինը կազմում է 198,659,755.00 ՀՀ դրամ, իսկ մատակարարված վառելիքի քանակը՝ 513,619.00 լիտր:

Հաշվապահական (հարկային նշանակության) փաստաթղթերը

Ներկայացվել են ընդհանուր առմամբ 11 հանձնված հաշվետվություններ դրանց փաստացի հանձնումը հավաստող պաշտոնական փաստաթղթերով՝ հանձման ծանուցումներով:

Ըստ 2019թ. ներկայացված թվով 11 ԱԱՀ հաշվետվությունների միայն 2019թ. մինչև դեկտեմբեր ամիսը Ընկերության համախառն եկամտի հանրագումարը կազմում է 830,545,908.00 ՀՀ դրամ:

Հարկային մարմնից Հանձնաժողովի կողմից ստացված եզրակացության համաձայն Լիմոն գրուպ ՍՊԸ-ի համախառն եկամուտը 2016-2018թթ համար կազմում է 43,060,834.00 ՀՀ դրամ:

Ընկերության կողմից հայտը տալու պահին նախորդող երեք տարիների ընթացքում Լիմոն Գրուպ ՍՊԸ-ի համախառն եկամուտը կազմում է 873,606,742.00 ՀՀ դրամ:

Իրավական հիմքերն ու հիմնավորումները

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները /անգործությունը/ և որոշումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի սահմանմամբ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները /անգործությունը/ և որոշումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի

Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ նաև՝ Կոմիտե/ հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1/հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա/երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության

2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 526-Ն որոշման 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև՝ ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ 1/ շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակից ըհայտարարվում է ընտրված մասնակից,

2/ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Տվյալ դեպքում՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը որոշելիս Հանձնաժողովը գտել է, որ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում և 30.12.2019թ. ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված եզրակացության մեջ առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորան չափանիշին համապատասխանությունը առկա չէ, քանի որ Ընկերության կողմից համանման ներկայացված /նմանատիպ/ պայմանագիրը դեռևս ավարտված չէ (որպես պայմանագրի ավարտ սահմանված է 29.12.2019թ):

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին համապատասխանությունը առկա չէ, քանի որ Ընկերության կողմից «հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկից»:

Հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու անհամապատասխանությունները:

Ընկերությունը ներկայացրել է փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը արձանագրել է՝

Ընկերության կողմից ներկայացված համանման պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների հանրագումարային ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է Ընթացակարգի շրջանակներում Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ինչպես նաև ըստ Ընկերության ներկայացրած գրության պետք է ներկայացվեր թվով 18 պայմանագիր, այնինչ փաստացի ներկայացել է միայն 14-ը, ուստի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը առկա չէ:

Հանձնաժողովը չի ստացել Կոմիտեից տրված որևէ նոր տեղեկատվություն, մինչդեռ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից, ուստի քանի որ Ընկերությունը հայտ է ներկայացրել 09.12.2019թ. ուստի Ընթացակարգի շրջանակներում հաշվետու տարիներ են համարվում 2016-2018թթ:

Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացների կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ որոշել է մերժել «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Գտնում ենք, որ Հանձնաժողովը սխալ է գնահատել իր տրամադրության տակ եղած փաստերն ու ապացույցները և հանգել է սխալ եզրակացության, քանի որ Ընկերությունը (От кого: GEVORG DANIELYAN <gevorg.danielyan.89@mail.ru> Кому: t.abrahamyan <t.abrahamyan@mil.am> Копия: artyom.voskanyan.9 <artyom.voskanyan.9@mail.ru> Дата: Среда, 15 января 2020, 19:43 +04:00 Тема: LIMON GRUP 2-RD PULI PASTATXTER SHTKVAC xndrum enq ditarkel ays tarberak@)վավերապայմաններով) վավերապայմաններով էլեկտրոնային նամակով ներկայացրել է վերը նշված պայմանագրերը և հաշվապահական (հարկային նշանակության) փաստաթղթերը, որոնք հիմնավորումն է, որ Պայմանագրերի արժեքը գնային արտահայտությամբ ընդհանուր առմամբ կազմում է 416,028,467.00 ՀՀ դրամ, իսկ մատակարարված վառելիքի ընդհանուր քանակը՝ 1,084,220.00 լիտր (տես հավելված 1-ում), իսկ Ընկերության կողմից հայտը տալու պահին նախորդող երեք տարիների ընթացքում Լիմոն Գրուպ ՍՊԸ-ի համախառն եկամուտը կազմում է 873,606,742.00 ՀՀ դրամ:

Եթե այս թվերը համադրում ենք նրանց հետ, որոնք պահանջում է Հանձնաժողովը, ապա ստանում ենք հետևյալը՝

Վերջին երեք հաշվետու տարիների ընթացքում Ընկերության համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լիներ 736,000,000 ՀՀ դրամից (Ընկերության ներկայացրած գնային առաջարկից), մինչդեռ Լիմոն Գրուպ ՍՊԸ-ի համախառն եկամուտը կազմում է 873,606,742.00 ՀՀ դրամ:

Ընկերության կողմից համանման պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լիներ 368,000,000 ՀՀ դրամից՝ (Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից), մինչդեռ Ընկերության Պայմանագրերի արժեքը գնային արտահայտությամբ ընդհանուր առմամբ կազմում է 416,028,467.00 ՀՀ դրամ:

Վերոնշյալ թվերի պարզ համադրությունը ցույց է տալիս, որ Հանձնաժողովը պատշաճ չի ուսումնասիրել գնահատել իրեն տրամադրված տեղեկատվությունը և կայացրել է վերացական և անորոշ որոշում:

Նշվածը հաստատվում է նաև նրանով, որ որոշման մեջ որևէ թվային և փաստական տվյալներ առկա չեն, չկա վերլուծական և պատճառաբանական մաս: Անորոշ դատողություններով Հանձնաժողովը գտել է, որ չափանիշների համապատասխանություն առկա չէ:

Բացի այդ Հանձնաժողովի արձանագրությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում նաև, որ Հանձնաժողովը իրեն գցել է տեսական իրավական խնդրի մեջ ևս, քանի որ ինքնուրույն որոշել է, որ «Ընթացակարգի շրջանակներում հաշվետու տարիներ են համարվում 2016-2018թթ»:

Հանձնաժողովը սխալ է մեկնաբանել նորմատիվ իրավական ակտը՝ գտնելով, որ ԱԱՀ-ի հարկային համակարգում գործող ընկերության համար իրավունք ունի անտեսել գործող տարվա ցուցանիշները, քանի որ ԱԱՀ-ի հարկման համակարգում գործող ընկերության համար հաշվետու ժամանակաշրջանը կարող է լինել ամիսը կամ եռամսյակը, իսկ տվյալ դեպքում Ընկերության համար գործել է ամսեկան հաշվետու շամանակաշրջանի կանոնը:

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կոտրի համաձայն՝ համախառն եկամուտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ ստացման ենթակա Օրենսգրքով սահմանված եկամուտների հանրագումար:

Նկատենք, որ օրենսդիրը հաշվետու տարի արտահայտությունը չի օգտագործում, այլ օգտագործում է հաշվետու ժամանակաշրջան արտահայտությունը, քանի որ տարբեր հարկային համակարգերով հարկվելու դեպքում հաշվետու շամանակաշրջանները տարբեր են

ՀՀ հարկային օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանը ժամանակահատված է, որի համար հաշվարկվում և վճարվում են հարկեր և (կամ) բնօգտագործման վճար, ներկայացվում են հարկային հաշվարկներ (բացառությամբ ներմուծման հարկային հայտարարագրերի, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին հայտարարության և արտահանման հարկային հայտարարագրերի), կատարվում են Օրենսգրքով սահմանված այլ պարտավորություններ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանը վերաբերում է միայն հարկային հաշվարկներին, իսկ ժամանակահատվածը՝ ինչպես հարկային այլ փաստաթղթերին, այնպես էլ վճարման վերջնաժամկետներին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանը հաշվետու ամիսը կամ հաշվետու եռամսյակը կամ հաշվետու կիսամյակը կամ հաշվետու տարին է:

ՀՀ հարկային օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հաշվետու ամիսը որևէ ամսվա 1-ից մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներառյալ ժամանակահատվածն է: Հաշվետու եռամսյակը որևէ տարվա հունվար, ապրիլ, հուլիս կամ հոկտեմբեր ամիսների 1-ից մինչև տվյալ տարվա համապատասխանաբար մարտ, հունիս, սեպտեմբեր կամ դեկտեմբեր ամիսների վերջին օրը ներառյալ ժամանակահատվածն է: Հաշվետու կիսամյակը որևէ տարվա հունվար կամ հուլիս ամիսների 1-ից մինչև տվյալ տարվա համապատասխանաբար հունիս կամ դեկտեմբեր ամիսների վերջին օրը ներառյալ ժամանակահատվածն է: Հաշվետու տարին կամ հարկային տարին որևէ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածն է: Սույն մասի դրույթների կիրառության իմաստով, հաշվի են առնվում սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին կետի ա ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ պետական հարկեր, որոնց տեսակներից է ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև՝ ԱԱՀ):

ՀՀ հարկային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են հարկման ընդհանուր և հատուկ համակարգեր: Հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները հարկվում են, մասնավորապես, ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով:

Տվյալ դեպքում «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում հարկվող տնտեսվարող սուբյեկտ է, որը հարկվում է ԱԱՀ-ով (տես կից հարկային հաշվարկները):

ՀՀ հարկային օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

Այսպիսով ԱԱՀ-ով հարկվող տնտեսվարողները աշխատում են ամենախիստ հարկային համակարգում, քանի որ յուրաքանչյուր ամիս ոչ միայն պարտավոր են հաշվարկ ներկայացնել, այլ նաև յուրաքանչյուր ամիս պետք է վճարեն համապատասխան հարկերը:

Այսինքն, զուտ միայն այն փաստը, որ հայտը տալու պահին «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն չի ունեցել որևէ ուշացրած հարկային պարտավորություն ինքնին հաստատում է այն փաստը, որ Լիմոն Գրուպ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հաշվարկների թվերը ճիշտ են, իսկ հարկերը՝ վճարված:

Այսպիսով ստացվում է, որ Լիմոն Գրուպ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահին նախորդած երեք տարվա կտրվածքով հաշվետու ժամանակաշրջանում ունեցել է 873,606,742 ՀՀ դրամի չափով համախառն եկամուտ:

Այսպիսով պարզ տեսնում ենք, որ յուրաքանչյուր հարկային համակարգ ունի իր ուրույն հաշվետու ժամանակաշրջանը, իսկ մեր դեպքում հաշվետու ժամանակաշրջանը դա հաշվետու ամիսն է, ուստի ամսեկան կարգով հարկ հաշվարկող և վճարող Ընկերությանը անտրամաբանական է պարտադրել տրամադրել հաշվետու տարվա մասին տեղեկատվություն:

Այսպիսով ուսումնասիրելով Կառավարության որոշման մեջ տեղ գտած ձևակերպումը և համադրելով այն օրենսդրական պահանջների հետ գալիս եմ այն

համոզմունքին, որ անորոշությունը հաղթահարելու համար առկա է նորմատիվ ակտի մեկնաբանության կարիք:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Տվյալ դեպքում օրենքի նպատակները և սկզբունքները սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար (...) գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այսպիսով, եթե գանք Հանձնաժողովի կողմից «հաշվետու երեք տարի» արտահայտությանը տրված մեկնաբանությամբ ապա կստացվի, որ ԱԱՀ-ի հարկային համակարգով աշխատող պարտաճանաչ կազմակերպությունը, անկախ նրանից, որ պատշաճ ամսեկան կարգով հաշվարկել և պետությանն է վճարել բոլոր հարկերը,

զրկվում է իր վերջին տարվա ցուցանիշների վրա հենվելու և գնումների ընթացակարգերին մասնակցելու հավասար հնարավորությունից՝ դրանով իսկ ենթարկվելով խտրական վերաբերմունքի, որը պայմանավորված է կոնկրետ հարկային համակարգում գործելու փաստով:

ամսեկան ԱԱՀ հաշվարկ ներկայացնող և հարկեր վճարող ընկերությանը պարտադրում են ներկայացնել տարեկան հաշվարկներ, ինչը Ընկերությունն անել չի կարող քանի որ օրենսդրորեն իր հաշվետու ժամանակաշրջանը ամիսն է, ուստի Ընկերության վրա դրվում է անհամաչափ բեռ ներկայացնելու մի բան, որը վերջինս օբյեկտիվորեն չի կարող

ներկայացնել, ուստի խախտված է կիրառված միջոցների և հետապնդած նպատակի միջև ողջամիտ համաչափության սկզբունքը:

այն ընկերությունները, որոնք չունեն երկար տարիների պատմություն, սակայն վերջին տարվա ընթացքում կայուն մուտք են գործել ոլորտ և հավաքել են բավարար պատմություն և հիմքեր գնումներին մասնակցելու համար զրկվում են դա անելու հնարավորությունից, քանի որ Հանձնաժողովը պարտադրում է, որ մրցույթին մասնակցեն շուկայի հին գերհզոր ներկայացուցիչները՝ դրանով իսկ սահմանափակվում է մասնակիցների շրջանակի ընդլայնումը խրախուսելու սկզբունքը:

Վերը նշված բոլոր փաստարկների համադրությունը խախտում է մասնակիցների իրավահավասարության սկզբունքը, քանի որ կախված հարկային համակարգից նորաստեղծ ընկերությունը հների նկատմամբ հայտվում է ծայրահեղ անբարենպաստ և անհավասար իրավական կարգավիճակում:

Իրական խնդիրը կայանում է նրանում, որ անառարկելի փաստ է, որ մինչև 2018թ. մայիսյան հեղափոխությունը այս շուկան (վառելիքի) փակ է եղել նոր մասնակիցների համար և ոլորտը դե ֆակտո ազատականացվել է միայն հեղափոխությունից հետո: «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն ոլորտ է մտել միայն շուկայի ազատականացումից հետո (տես իրավաբանական անձանց պետական ռեգիստրի քաղվածքը): 2018 թվականին ընկերությունն ունեցել է ընդամենը 43 միլիոն ՀՀ դրամի իրացման շրջանառություն, սակայն 2019թ. արդեն կարողացել է միայն մինչև դեկտեմբերը ունենալ ավելի քան 830 միլիոն ՀՀ դրամի շրջանառություն:

Նման պայմաններում Հանձնաժողովը իր տված մեկնաբանությամբ կրկին հետ քայլ է կատարում առաջիկա երկու տարվա համար շուկան փակ պահելով նոր, մութ անցյալ չունեցող, հարկերը վճարող, թափանցիկ ընկերությունների համար՝ շարունակելով աշխատել շուկայի նախկին տերերի հետ:

Այսպիսով, սույն գործով մենք վիճարկում ենք ոչ թե ՊԵԿ տեղեկանքը, այլ ՊԵԿ ուղարկված հարցման բովանդակությունը, քանի որ հարցումը վերոնշյալ հիմնավորումներով պետք է ուղարկվեր այն տրամաբանությամբ, որ ստացվեր տեղեկատվություն հայտը տալուն նախորդող հաշվետու ժամանաշրջանների վերաբերյալ՝ երեք տարվա կտրվածքով:

Միայն այս տրամաբանությամբ տեղեկատվությունը կարող է լիարժեքորեն ծառայել օրենքի հետապնդած նպատակներին, քանի որ օրենքի հետապնդած նպատակը հանգում է նրան, որ գործարքը վստահի մի տնտեսվարողի, ով առնվազն նոր գործարքի ծավալով

ունեցել է շուկայում դերակատարում, իսկ ՊԵԿ հարցման նպատակը կայանում է նրանում, որ իրավասու լիազոր մարմնից ճշտվի ներկայացված տեղեկության իսկությունը և ստիպի տնտեսվարողներին գնումներին մասնակցելու իրավունք վերապահելով ստվերից գործունեությունը դուրս բերել:

ՊԵԿ հարցումը ինքնանպատակ չէ, այլ տեղեկատվության ստուգման գործիք, իսկ անհրաժեշտ տեղեկատվությունը այն է, թե արդյոք տվյալ տնտեսվարողը իրապես մինչև հայտ տալու պահը ունեցել է համապատասխան ծավալի շրջանառություն, թե ոչ:

Տվյալ դեպքում Ընկերությունը այդ շրջանառությունն ունեցել է և ունեցել է պայմանգիր կնքելու համար նախապատմություն և ներուժ, սակայն նորմի սխալ մեկնաբանման արդյունքում այդ ներուժը անտեսվել է, իսկ իրավունքները ոտնահարվել:

Բացի այդ, պետք է նկատել, որ Հանձնաժողովի կողմից գնահատման գործընթացը չի համապատասխանում «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ Կառավարության մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման պահանջներին, մասնավորապես՝ Հանձնաժողովը ՊԵԿ հարցումն ուղարկել է կարգի 48-րդ կետու համաձայն, մինչդեռ 10.10.19 N 1422-Ն որոշմամբ կետը փոփոխվել է և այլևս ունի հետևյալ խմբագրությունը՝ «48. Եթե հայտերի գնահատման արդյունքում անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա այն համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը»:

«Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել են «Մասնագիտական փորձառություն» և «Ֆինանսական միջոցներ» չափանիշների անհամապատասխանության հիմքով մինչդեռ այդ հարցերը և չափանիշները սահմանող նորմերը (Կառավարության որոշման 62,63,64,65,66 կետեր) ուժը կորցրած են եղել դեռևս 10.10.19 թիվ N 1422-Ն փոփոխող որոշմամբ:

Այսպիսով «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի վրա հայտի համապատասխանության գնահատման փուլում դրվել են որոշակի չափանիշների համապատասխանելու պարտականություն, որը նախատեսված չէ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով:

Հարկ է նկատել, որ մենք այստեղ վիճարկում ենք ոչ թե հրավերը, այլ հայտի համապատասխանության գնահատման գործընթացը, որը պետք է համապատասխաներ Կառավարության որոշմանը, մինչդեռ գործընթացն իրականացվել է հիմք ընդունելով նախկին կարգավորումները և խախտելով Ընկերության իրավունքները:

Վերը նշված փոփոխությունները միտված են եղել ոլորտի ազատականացմանը և շուկայի նոր մասնակիցների համար նախկին գերիզորների հետ հավասար մրցակցելու հնարավորություն ընձեռնելուն, իսկ վառելիքի շուկան բոլոր երկրներում է հանդիսանում կարևորագույն և ամենաեկամտաբերներից մեկը, այդ իսկ պատճառով մեզ հասկանալի տրամաբանությամբ շուկայի նորեկների համար շարունակում են ստեղծվել արհեստական խոչընդոտներ, որոնք հույս ունենք վերացնել Գնումների բողոքարկման խորհրդի արդարացի որոշման օգնությամբ:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2020թ.-ի թիվ 4 արձանագրային որոշումը՝ թիվ 1 չափաբաժնի մասով, վերացնելով որոշման հետևանքները:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ին նուն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.02.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ հնարավորություն տալով «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 04.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 12.02.2020թ.-ի թիվ Մ-5148-2020 գրությամբ հայատնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթում /այսուհետ՝ Ընթացակարգ/ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով Ընկերությանը 2019թ. դեկտեմբերի 26-ին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, որոնցում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Համաձայն Ընկերության կողմից 09.12.2019թ. ներկայացված Հավելված N 1-ի՝ Ընկերությունը հավաստում է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, այնինչ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանությունը հիմնավորելու համար Ընկերության կողմից ներկայացված համանման /նմանատիպ/ պայմանագիրը 09.12.2019թ. դրությամբ դեռևս ավարտված չէր (որպես պայմանագրի ավարտ սահմանված է 29.12.2019թ.),

- Համաձայն Ընկերության կողմից 09.12.2019թ. ներկայացված Հավելված N 1-ի՝ Ընկերությունը հավաստում է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, մասնավորապես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, այնինչ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում Ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկից:

2020թ հունվարի 10-ին գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և առաջարկել մասնակցին սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունները: «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն 2020թ. հունվարի 15-ին ներկայացրել է փաստաթղթեր, սակայն դրանց ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորելու համար ներկայացված համանման /նմանատիպ/ պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է Ընթացակարգի շրջանակում Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Ընդ որում, «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գրության համաձայն պետք է ներկայացվեր թվով 18 (տասնութ) պայմանագիր, այնինչ փաստացի ներկայացվել են միայն 14-ը (տասնչորս):

- Ընթացակարգի հրավերի 8.19 կետի համաձայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության գնահատման արդյունքում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում, արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացնելու, այնպես էլ Կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ, այնինչ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ստացել Կոմիտեից տրված որևէ նոր տեղեկատվություն:

Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: ՀՀ հարկային օրենսգրքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հաշվետու տարին կամ հարկային տարին որևէ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածն է:», և քանի որ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 09.12.2019թ., ուստի Ընթացակարգի շրջանակներում հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներ են համարվում 2016-2018թթ.:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Հարկ եմ համարում նշել նաև, որ Մասնակցի կողմից բողոքի մեջ նշված ՀՀ կառավարության 10.10.2019թ. N 1422-Ն որոշման պահանջները, համաձայն նույն որոշման 2-րդ կետի, չեն տարածվում մինչև որոշումն ուժի մեջ մտնելն սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա, իսկ վերոհիշյալ գնման գործընթացն սկսվել է 30.09.2019թ.:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով 29.10.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը թիվ 1 հավելվածով ներկայացրած դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Մասնակիցը թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկով հայտնել է, որ ուսումնասիրել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Ավիավառելիք	810 000 000	162 000 000	972 000 000
2	Ամառային դիզ. վառելիք	825 000 000	165 000 000	990 000 000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.12.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է.

4.2-րդ կետի համաձայն՝ առաջին տեղ գբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3-րդ կետի համաձայն՝ հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ ՀՀ ՊԵԿ) կողմից 30.12.2019թ.-ին տրված տեղեկատվության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 43 060 834 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 10.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում և 30.12.2019թ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության մեջ առկա են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝ Մասնակցի կողմից 09.12.2019թ.-ին ներկայացված Հավելված N 1-ով՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, այնինչ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման /նմանատիպ/ պայմանագիրը 09.12.2019թ. դրությամբ դեռևս ավարտված չի եղել (որպես պայմանագրի ավարտ սահմանված է եղել 29.12.2019թ.), ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, այնինչ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է եղել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է երեք աշխատանքային օրով և Մասնակցին առաջարկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով շտկելու անհամապատասխանությունը:

Մասնակիցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորելու համար ներկայացված համանման /նմանատիպ/ պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է եղել Ընթացակարգի շրջանակում Մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և ներկայացվել են 26.08.2019թ.-ից մինչև 18.11.2019թ.-ը ընկած ժամանակահատվածի պայմանագրերը, այնինչ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 09.12.2019թ.-ին ուստի Ընթացակարգի շրջանակներում հաշվետու տարիներ են համարվում 2016-2018թթ.,

- Ընթացակարգի հրավերի 8.19 կետի համաձայն՝ Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության գնահատմուսն արդյունքում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում, արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացնելու, այնպես էլ Կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ, այնինչ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնոմների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ստացել Կոմիտեից արված որևէ նոր տեղեկատվություն:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ մերժել է «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 04.02.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը …

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին

ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում

նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի

գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը՝ բացառությամբ մասնագիտական վերապատրաստման, աուդիտորական կամ խորհրդատվական ծառայությունների, շինարարական ծրագրերի՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտներով կամ նորմատիվ-տեխնիկական պահանջներով սահմանված դեպքերի կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին,

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապա-տասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով 29.10.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով ներկայացրած դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Մասնակիցը թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկով հայտնել է, որ ուսումնասիրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Ավիավառելիք	810 000 000	162 000 000	972 000 000
2	Ամառային դիզ. վառելիք	825 000 000	165 000 000	990 000 000

Հանձնաժողովի 10.12.2019թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ գբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից 30.12.2019թ.-ին տրված տեղեկատվության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 43 060 834 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 10.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում և 30.12.2019թ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության մեջ առկա են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝ Մասնակցի կողմից 09.12.2019թ.-ին ներկայացված Հավելված N 1-ով՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, այնինչ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման /նմանատիպ/ պայմանագիրը 09.12.2019թ. դրությամբ դեռևս ավարտված չի եղել (որպես պայմանագրի ավարտ սահմանված է եղել 29.12.2019թ.), ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, այնինչ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է եղել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկից, ինչով պայմանավորված նիստը կասեցվել է

երեք աշխատանքային օրով և Մասնակցին առաջարկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով շտկելու անհամապատասխանությունը:

Մասնակիցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորելու համար ներկայացված համանման /նմանատիպ/ պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է եղել Ընթացակարգի շրջանակում Մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և ներկայացվել են 26.08.2019թ.-ից մինչև 18.11.2019թ.-ը ընկած ժամանակահատվածի պայմանագրերը, այնինչ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 09.12.2019թ.-ին ուստի Ընթացակարգի շրջանակներում հաշվետու տարիներ են համարվում 2016-2018թթ.,

- Ընթացակարգի հրավերի 8.19 կետի համաձայն՝ Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության գնահատմուսն արդյունքում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում, արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացնելու, այնպես էլ Կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ, այնինչ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնոմների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ստացել Կոմիտեից արված որևէ նոր տեղեկատվություն:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ մերժել է «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակիցը, ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ընթացակարգի հրավերը և հայտնելով, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, որպես պայմանագրի

կատարման համար ընդհանուր գին ներկայացրել է 972 000 000 ՀՀ դրամ գումարի չափով գնային առաջարկ: Սակայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու (2019թ.) տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 43 060 834 ՀՀ դրամ, ինչը պակաս է վերջինիս կողմից 1-ին չափաբաժնով ներկայացված գնային առաջարկից: Մասնակցին տրվել է վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, սակայն վերջինիս կողմից այն չի շտկվել:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով Մասնակցի հայտը, գործել է իրավաչափ՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի դրույթները, քանի որ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու (2019թ.) տարվան նախորդող երեք հաշվետու տարիների (2016թ.-2018թ.) համախառն եկամուտի հանրագումարը (43 060 834 ՀՀ դրամ), պակաս է վերջինիս կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից՝ 972 000 000 ՀՀ դրամ գումարից, իսկ Մասնակիցը, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում չներկայացնելով հայտը ներկայացնելու (2019թ.) տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարի համապատասխանության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր կամ այլ ապացույցներ, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 63-րդ կետով սահմանված պահանջներին (ֆինանսական միջոցներ), ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու մասին կայացված որոշումն բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Վերոնշյալով պայմանավորված, բողոքում նշված մյուս հիմքերին ու հիմնավորումներին (մասնագիտական փորձառություն), Բողոքներ քննող անձը չի անդրադառնում, այն փաստի հաշվառմամբ, որ դրանք այլևս չունեն ու չեն էլ կարող, նույնիսկ բավարար գնահատվելու դեպքում, հիմք հանդիսանալ կամ հանգեցնել բողոքի բավարարմանը: Ուստի բողոքն արդեն իսկ, այդ հիմքով, ենթակա է մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով Մասնակցի հայտը՝ գործել է իրավաչափ,

ապահովելով մասնակիցների հավասար իրավունքներն՝ հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ, Կարգի 48-րդ և 63-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 04.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/16 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**